



# ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

29 օգոստոսի, 2014թ.

ք. Երևան

## «Հակակոռուպցիոն ուսուցում» Երևանի ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար

2014 թվականի օգոստոսի 27-ից 29-ը Երևանում տեղի ունեցավ եռօրյա հակակոռուպցիոն ուսուցում Երևանի ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար:

«Այս հակակոռուպցիոն ուսուցումներն իրականացնում ենք ամբողջ Հայաստանով, մեր շահառուները մոտ 100 քաղաքացիական հասարակության կազմակերպություններ են, սա թվով 9-րդ հակակոռուպցիոն ուսուցումն է և 5-րդը Երևանում: Յուրաքանչյուր ուսուցման մասնակցում են միջինը 10-ը հասարակական կազմակերպությունների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ», - սեմինարի բացման ժամանակ ասաց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զառոյանը:

Առաջիկայում հանրությանը կներկայացվի Հայաստանի 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության վերջնական նախագիծը: Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգով նախատեսվել է Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների համակարգում ու դրանց կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդին, դրա կազմում ընդամենը 2 տեղ հատկացնելով ՔՀԿ-ների ներկայացուցիչներին: Սեմինարին մասնակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքով հասարակության շահերը ներկայացնելու համար 2 ՀԿ-ի ներկայացուցիչը քիչ է: «2 ՀԿ-ն շատ քիչ է, առնվազն 5 ՀԿ-ն նոր միայն կարող է որոշակի փոփոխություններ իրականացնել, որովհետև 2 ՀԿ-ներն ի վերջո հասարակության ձայնը բարձրացնողներն են», - ասաց Սոցիալական ծառայողների վերապատրաստման և զարգացման կենտրոնի ՀԿ-ի նախագահ Դիաննա Մակարյանը: Ուսուցման մասնակից, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի ներկայացուցիչ Արշակ Խաչատրյանի կարծիքով. «ՀԿ-ները պետք է ավելի շատ ներկայացված լինեն և ընդհանրապես, եթե Կառավարությունը չմասնակցի ավելի ճիշտ կլինի, քանի որ եթե մի բանը պետք է հսկի մի մարդ, որն ինքն է կատարում, ինքը չի կարող իրեն հսկել», - նշեց:

Ո՞րն է ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում, որո՞նք են տեղեկատվություն ստանալու մեխանիզմներն ու աղբյուրները, ինչպե՞ս իրականացնել լրագրողական հետաքննություններ: Այս և այլ հարցերը ուսուցման եռօրյա ծրագրի օրակարգում են եղել:

Օրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Օրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացում և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Օրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Օրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Օրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

**Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան** (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի զերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

**Ինֆորմացիայի ազատության կենտրոնը** (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

**Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.** Օրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00 | 199: Ֆաքս 5802 | [or@avla.am](mailto:or@avla.am) | [avla.am](http://avla.am) | [www.inform.org.am](http://www.inform.org.am) | [www.heia.am](http://www.heia.am)



<p>Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա Հասցե՝ Նալբանդյան 7, ք. 2 Երևան, Հայաստան, 0010</p> <p>Հեռախոս: +37410 54 01 99 Հեռապատճե: +37410 58 02 99</p>	<p>Ինֆորմացիայի ազատության կենտրոն Հասցե՝ Բուզանդի 1/3 Երևան, Հայաստան, 0010</p> <p>Հեռախոս: +37410 56 03 60 Հեռապատճե: +37410 56 03 60</p>	<p>Օրագիրը Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից</p> <p>Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն Հեռախոս +37410 54 64 94 Հեռապատճե +37410 54 64 95</p>	<p>Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:</p> <p>Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոտ-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:</p>
--	---	---	--